Ավետիք Իսահակյան

Ժողովրդական բայաթիներ

Սիրելի՛ք, մնա՞ք բարով,
Ճամփո՛րդ եմ, մնա՞ք բարով.
Ով գիտե՝ ետ գամ, չըգամ,
Թղջությամբ մնա՞ք բարով:

Վարդը նո՛ր էր, կոկոն դարձավ,
Կոկոնի մեջ էլ թառամավ.
Սիրտս քեզնով նոր պիտի բացվեր,
Թոռոմելը քեզնից եղավ …

Ձեռ ու ոտս կապեցին,
Բանտը դրին, կողպեցին.
Ո՛չ թողեցին գանգատվիմ,
Ո՛չ էլ լեզուս կըտրեցին:

Հոգուտ մեռնիմ, մեղք չունիմ,
Խըղճի արի, մեղք չունիմ,
Աչքս տեսավ, սիրտս ուզեց,
Ախր ես ի՞նչ մեղք ունիմ:

Ա՞խ, վաթա՛ն ջան, մնալով,
Պանդուխտ հողում մնալով,
Ջիվան կյանքս մաշեցի,
Քեզնից հեռո՞ւ մնալով:

Լաց կուլամ սգվորի պես,
Դարդերս մենձ բեռի պես,
Թափս կտրավ, վար ընկա
Աշունքվա խազալի պես …

1900